2024-2025 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ
CONCOURS D'ENTREE 2024-2025

Հասարակագիտություն / Sciences sociales

(Իրավագիտության ֆակուլտետ / Faculté de Droit)

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ

Առաջադրանքի կառուցվածքն ու սկզբունքները

Քննական հարցաթերթը բաղկացած է երեք հատվածներից:

1-ին հատվածում (1-60-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր:

2-րդ հատվածում (61-70-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է երկու միավոր:

3-րդ հատվածում (71-75-րդ հարցեր) բաղադրյալ հարցեր են՝ բաղկացած չորս ենթահարցերից: Պահանջվում է աղյուսակի աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև նշել ճիշտ կապերն ու համապատասխանությունները: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասանը՝ չորս միավոր:

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: *Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:* *Միայն պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:*		
1.	Պաշտպանի մասնակցությունը գործին սկսվում է գործի՝	ա/ նախնական քննության պահից բ/ հետաքննության պահից գ/ դատական նիստը սկսվելու պահից դ/ պաշտպանը չի մասնակցում գործին
2.	Ո՞րն (որո՞նք) է Սահմանադրական դատարանի դերը պետական մարմինների («հակակշռող և զսպող լիազորությունների» միջոցով) հավասարակշռման իրականացման	ա/ ապահովում է Սահմանադրության գերակայությունը բ/ ապահովում է մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը գ/ ապահովում է մարդու բարեկեցությունը դ/ ճիշտ են ա և բ պատասխանները

	գործում:	
3.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է հանդիսանում տարածաշրջանային պայմանագիր.	ա/ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր (1789) բ/ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966) գ/ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիա (1950) դ/ Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966)
4.	Պետությունն օժտված է.	ա/ գերակայությամբ և ինքնիշխանությամբ բ/ հավասարությամբ և մարդասիրությամբ գ/ անհակասականությամբ և անկողմնակալությամբ դ/ անսահմանափակ իշխանությամբ
5.	Ու՞մ կողմից մշակվեց ժողովրդավարական սոցիալիզմի գաղափարը.	ա/ Էդուարդ Բեռնշտայնի բ/ Կարլ Մարքսի գ/ Իմանուել Կանտի դ/ Ջոն Քեյնսի
6.	Ընդհանուր իրավասության դատարանը գործը քննում է.	ա/ միանձնյա բ/ կոլեգիալ՝ հինգ դատավորի կազմով գ/ կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով դ/ պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով
7.	ԼՂՀ-ում ե՞րբ է ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և պետական անկախություն հռչակելու հարցով անցկացվել հանրաքվե.	ա/ 1988 թ. փետրվարի 20 բ/ 1989 թ. դեկտեմբերի 1 գ/ 1991 թ. սեպտեմբերի 21 դ/ 1991 թ. դեկտեմբերի 10
8.	Իրավաչափ վարքագծի համար նախատեսված նորմերը կոչվում են.	ա/ արգելող բ/ իրավապաշտպան գ/իրավունակ դ/ կարգավորիչ
9.	Ո՞վ է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հեղինակը.	ա/Ալավիկի որդի Դավիթ բ/ Հովհաննես Օձնեցի գ/ Մխիթար Գոշ դ/ Լիպարիտ Սպարապետ
10.	Արցախի նախարարական տան նախահայրը եղել է.	ա/Առանշահիկը բ/ Վաչագան բարեպաշտը գ/ Եսայի Հասան Ջալալյանը դ/ Առանը
11.	Դատարանում գործի քննությունը.	ա/ մրցակցային է բ/ հրապարակային է գ/ համամասնական է դ/ ճիշտ են ա և բ պատասխանները

12.	Նոտարիատը.	ա/ հաստատում է իրավաբանական փաստեր բ/ հաստատում է իրավարար փաստեր գ/ հատուկ քաղաքական մարմին է դ/ հատուկ հասարակական մարմին է
13.	Կախված ծագման հիմքերից պարտավորությունները լինում են.	ա/ պայմանագրային և արտապայմանագրային բ/ պայմանական և արտապայմանական գ/ պատվիրվող և ոչ պատվիրվող դ/ պայմանագրային և պատվիրվող
14.	Որտե՞ղ է տեղակայված Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:	ա/ Փարիզում բ/ Հագայում գ/ Ստրասբուրգում դ/ Բեռլինում
15.	Օրենքների պաշտոնական մեկնաբանությունը ունի.	ա/ իրավարար հետևանքներ բ/ դաստիարակչական հետևանքներ գ/ իրավական հետևանքներ դ/ գիտական հետևանքներ
16.	Ներպետական իրավունքը՝ որպես համակարգ, քանի՞սն է.	ա/ որքան պետություն այնքան ներպետական համակարգ բ/ որքան պայմանագիր այնքան ներպետական համակարգ գ/ որքան նորմատիվ իրավական ակտ այնքան համակարգ դ/ մեկն է
17.	Դիսպոզիցիան.	ա/ հարկադրանք է բ/ ենթադրություն է գ/ կարգադրություն է դ/ բռնություն է
18.	Պետությունների միջազգային վեճերի լուծման գործում գլխավոր դերը խաղում են.	ա/ դատական միջոցները բ/ համաձայնեցնող, հաշտեցնող միջոցները գ/ խորհրդատվության միջոցները դ/ լրատվության միջոցները
19.	Միակողմանի գործարքի տեսակ է.	ա/ առքուվաճառքը բ/ կտակը գ/ ապրանքափոխանակումը դ/ վարձակալությունը
20.	Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին համաձայնագիրը.	ա/ Հաագայի 2-րդ համաձայնագիրն է բ/ Հաագայի 3-րդ համաձայնագիրն է գ/ Ժնևի 2-րդ համաձայնագիրն է դ/ Ժնևի 3-րդ համաձայնագիրն է
21.	Աշխատանքային պայմանագրերը ըստ ի բենց գործողության ժամկետի լինում են.	ա/ որոշակի և անորոշ ժամկետով բ/ ուղակի և անուղակի ժամկետով գ/ որոշյալ և կարճատև ժամկետով դ/ որոշյալ և որոշակի ժամկետով

22.	Պետությունը՝ որպես հանրային իշխանություն, ունի հարկադրանքի կիրառման.	ա/ միասնական իրավունք բ/ համապատասխան իրավունք գ/ օբյեկտիվ իրավունք դ/ մենաշնորհային իրավունք
23.	Ո՞ր մարմինն է պետության շահերի պաշտպանության հայց հարուցում դատարանում.	ա/ ոստիկանությունը բ/ դատախազությունը գ/ քննիչը դ/ կառավարությունը
24.	Հետաքննության մարմինների ապօրինի գործողություններով պատճառված վնասի հատուցումը կատարում է.	ա/ Գլխավոր դատախազը բ/ Ոստիկանությունը գ/ Դատախազությունը դ/ Պետությունը
25.	Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավորների քանակը.	ա/ որոշվում է անդամ երկրներից յուրաքանչյուրի բնակչության թվի հիման վրա բ/ յուրաքանչյուր տարի փոխվում է՝ կախված լսվող գործերի քանակից գ/ հավասար է համաձայնագրի մասնակից պետությունների՝ Եվրոպայի խորհրդի անդամների քանակին դ/ հավասար է եվրոպայի բոլոր երկրների քանակին
26.	Թուրքիան հաստատեց «Հայոց ազգային սահմանադրությունը».	ա/ 1863թ. բ/ 1853թ. գ/ 1873թ. դ/ 1913թ.
27.	Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է.	ա/ Բարձրագույն դատական խորհուրդը բ/ ՀՀ վարչապետը գ/ ՀՀ Ազգային ժողովը դ/ ՀՀ նախագահը
28.	Դատավորներն ենթարկվում են.	ա/ գլխավոր դատավորին բ/ կառավարությանը գ/ ազգային ժողովին դ/ օրենքին
29.	Ո՞վ է առաջին անգամ ձևակերպել պետական իշխանությունը օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև բաշխելու սկզբունքը:	ա/ Կ.Մարքսը բ/ Ժ.Մոնտեսքյոն գ/ Ֆ.Ռատցելը դ/ Կ. Հարտլանդը
30.	Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա.	ա/ կիրառվում են այդ նորմերը բ/ կիրառվում են օրենքները գ/ պետությունն է որոշում որը կիրառի դ/ երկուսն էլ չեն կիրառվում
31.	Ո՞րը օրենսդրական գործընթացի փուլ չէ.	ա/ օրենսդրական նախաձեռնության փուլ բ/ օրինագծի քննարկման և ընդունման փուլ գ/ ընդունված օրենքի մեկնաբանման փուլ դ/ ընդունված օրենքի ՀՀ նախագահի կողմից

		ստորագրման և հրապարակման փուլ
32.	Ո՞ր սկզբունքի համաձայն է ամբաստանյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված մեղադրող կողմի վրա.	ա/ մեղավորության կանխավարկածի համաձայն բ/ արդարացիության կանխավարկածի համաձայն գ/ անմեղության կանխավարկածի համաձայն դ/ իրավականության կանխավարկածի համաձայն
33.	Ու՞մ վրա է դրված խաղաղության և միջազգային անվտանգության համար գլխավոր պատասխանատվությունը.	ա/ Ազգային անվտանգության խորհրդի բ/ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գ/ ՆԱՏՕ-ի դ/ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության
34.	Ո՞ր մարմինն է կատարում ամուսնության պետական գրանցումը.	ա/ Քաղաքացիական դատարանը բ/ Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինը գ/ Նոտարիատը դ/ Հոգաբարձության մարմինը
35.	Բարոյական նորմերը հենվում են.	ա/ հեղինակության ուժի վրա բ/ պետության հարկադրանքի վրա գ/ ուժի հանդեպ հարգանքի վրա դ/ ուժի հեղինակության վրա
36.	Անձնական խուզարկությունը կարող է կատարվել քննիչի կողմից՝	ա/ ընթերակաների և մասնագետի մասնակցությամբ բ/ ընթերակաների և դատախազի մասնակցությամբ գ/ վկայի մանակցությամբ դ/ մասնագետի և փորձագետի մասնակցությամբ
37.	Քաղաքագիտական միտքը մշակել է օտարվածության հաղթահարման հայեցակարգ, որն անվանում են.	ա/ «մասնակցության ժողովրդավարություն» բ/«մասնակցության ժողովրդականություն» գ/ «մասնակցության ժողովականություն» դ/ «մասնակցության ժամանակացույց»
38.	Հետևյալ դատողություններից ո՞րն է սխալ.	ա/ փաստաբանն _իրականացնում է իրավական խորհրդատվություն բ/ փաստաբանը կազմում է իրավական փաստաթղթեր գ/ փաստաբանը չի մասնակցում նախաքննությանը դ/ փաստաբանն իրականացնում է ներկայացուցչություն դատարանում
39.	«Ժողովրդական կապիտալիզմի պետություն» հասկացությունը մշակել է.	ա/ Ջ Հելբրեյտը բ/ Ջ. Լոքը գ/ Մարկո Պոլոն դ/ Ռ.Ռեյգանը
40.	Քաղաքական համակարգի գործունեությունը կարգավորվում է.	ա/ իրավական նորմերով _ բ/ քաղաքական նորմերով _ գ/ բարոյական նորմերով _ դ/ բոլոր պատասխանները ճիշտ են
41.	Վարչական նորմի խախտումը.	ա/ հանցանք է բ/ զանցանք է գ/զանցանք և հանցանք է

		դ/ճիշտ պատասխանը բացակայում է
42.	Պարտավորության կողմերն են.	ա/ պարտատերը և հայցվորը բ/ պարտապանը և պարտավորը գ/ պարտատերը և պարտապանը դ/ հայցվորը և իրավազորը
43.	Հայաստանում դատավորների լիազորությունները դադարում են.	ա/ եթե լրանում է յոթանասունհինգ տարին բ/ եթե լրանում է յոթանասուն տարին գ/ եթե լրանում է վաթսունհինգ տարին դ/ եթե լրանում է վաթսուն տարին
44.	Իրավական կարգավորումն իրականացնում է.	ա/ դատարանը բ/ ոստիկանությունը գ/ դատախազությունը դ/ պետությունը
45.	«Հայոց ազգային սահմանադրությունը» ընդունվել է	ա/ Հայ առաքելական եկեղեցու կողմից բ/ Պատրիարքարանի կողմից գ/ Հայ ազգային ժողովի կողմից դ/ Հայ ավանդական կուսակցությունների կողմից
46.	Հայցային վաղեմության ժամկետը գործում է.	ա/ քրեական իրավունքում բ/ քաղաքացիական իրավունքում գ/ աշխատանքային իրավունքում դ/ ընտանեկան իրավունքում
47.	Գործարքի հիմքը.	ա/ պահանջն է բ/ տրամադրություն է գ/ կամքն է դ/ հարկադրանքն է
48.	Նվիրատվության տեսակ է.	ա/պարտապանի գույքի պահումը բ/հրաժարագինը գ/հաշվանցումը դ/պարտքի ներումը
49.	Վերաքննիչ բողոք բերելուց հետո ընդհանուր իրավասության դատարանի ակտերի օրինական ուժի մեջ մտնելը՝	ա/ արգելվում է բ/ դադարեցվում է գ/ կասեցվում է դ/ չեղարկվում է
50.	Ե՞րբ է ընդունվել «Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան».	ա/ 1981թ. բ/ 1979թ. գ/ 1966թ. դ/ 1951թ.
51.	Պայմանագիրը.	ա/կատարված փաստ է բ/ պարտավորություն առաջացնող իրավական փաստ է գ/ պարտավորություն առաջացնող բարոյական փաստ է դ/ պարտավորություն առաջացնող իրավական փաստ չէ
52.	Իրավական կարգավորման տիրույթում	ա/ իրավական կարգավորման առարկան

	գտնվող հասարակական հարաբերությունները կազմում են.	բ/ իրավական կարգավորման նորմերը գ/ իրավական կարգավորման ինստիտուտը դ/ իրավական կարգավորման մեթոդը
53.	Նախավճարի մասին համաձայնությունը կնքվում է.	ա/ գրավոր և բանավոր բ/ գրավոր գ/ բանավոր դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
54.	Վերաքննիչ դատարանը չի ստուգում ստորադաս դատարանների կայացրած ակտերի՝	ա/ հիմնավորվածությունը բ/ արդարացիությունը գ/ բարոյականությունը դ/ օրինականությունը
55.	Պետության կողմից որպես հասարակական հարաբերությունների կարգավորման միջոց ճանաչված սովորույթը կոչվում է.	ա/ սոցիալական բ/ իրավական գ/ իրավապահպան դ/ այլընտրանքային
56.	Փաստաբանը չի կազմում՝	ա/ դիմումներ բ/ նորմատիվ իրավական ակտեր գ/ բողոքներ դ/ իրավական փաստաթղթեր
57.	Ինչպիսի՞ հայց կարող է հարուցել դատախազությունը.	ա/ քաղաքացիական շահերի պաշտպանության բ/ դատավարության մասնակիցների շահերի պաշտպանության գ/ պետական շահերի պաշտպանության դ/ քաղաքական շահերի պաշտպանության
58.	Ի՞նչ կարող է ներկայացնել ոստիկանությունը հանրային մարմիններին և կազմակերպություններին	ա/ առաջարկություններ և բողոքներ բ/միջնորդագրեր և առաջարկություններ գ/ միջնորդագրեր և հրամանագրեր դ/ առաջարկություններ և հրամանագրեր
59.	Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել.	ա/ Սահմանադրական դատարանում բ/ վճռաբեկության կարգով՝ վճռաբեկ դատարաններում գ/վերաքննության կարգով՝ վերաքննիչ դատարաններում դ/ Արտակարգ դատարանում
60.	Ինչո՞վ էր պայմանավորում Ի. Կանտը խաղաղության դարաշրջանի հաստատումը	ա/ կառավարման ժողովրդավարական ձևի տարածումով բ/ կառավարման խորհրդարանական ձևի տարածումով գ/ կառավարման միապետական ձևի տարածումով դ/ կառավարման հանրապետական ձևի տարածումով

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:
Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր:
Միայն պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:

61.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ.	ա/ Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ բ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի իրավաբանական անձի կարգավիճակ ունենալու կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված լինելու հանգամանքը գ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը դ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները
62.	Ո՞վ է «Օրենքների ոգու մասին» աշխատության հեղինակը, և ե՞րբ է այն հրատարակվել.	ա/ Ժան Բոդեն,1566թ. բ/ Ժան Բոդեն,1748թ. գ/ Շարլ Մոնտեսքիո,1948թ. դ/ Շարլ Մոնտեսքիո,1748թ.
63.	Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ.	ա/ Ֆրանսիացի Ժան Բոդենն իր «Պատմության աշխարհագրական առանցքը» գրքում բացատրում է բնակչության, պետության, նրա քաղաքականության և բնական միջավայրի միջև կապը բ/ «Օրենքներ ոգու մասին» աշխատությունը և «Աստրախանի հայերի դատաստանագիրքը» թվագրվում են նույն թվականին՝ 1748: գ/ Ալֆրեդ Մեխենը առավելություն է տալիս պետության ծովային դիրքին: դ/ Մեծ տարածքների գաղափարի հեղինակը Հելֆորդ Մաքինդերն է:
64.	Ո՞ր երկու իրավունքի նորմերը ունեն հարկադրանք.	ա/ իրավազորող և արգելող բ/ արգելող և իրավապահպան գ/ արգելող և պարտադրող դ/ իրավազորող և պարտադրող
65.	Իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով Սահմանադրական դատարան կարող է (են) դիմել.	ա/ տարածքային կառավարման մարմինը բ/ դատարանները և գլխավոր դատախազը գ/ գլխավոր դատախազն ու նրա տեղակալները դ/ քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմինը

66.	Իրավունքի մի ճյուղը տարբերվում է մյուսից.	ա/ կարգավորման առարկայով բ/ կարգավորման ծավալով գ/ իրավական պատասխանատվությամբ դ/ անխուսափելիությամբ
67.	Միջազգային մարդասիրական իրավունքը սկսում է գործել.	ա/ երբ զինված ընդհարումն սկսվել է բ/ եթե պատերազմն արդարացի է գ/ մինչև պատերազմը սկսելը՝ հաշվի առնելով ուժի կիրառման արգելքը դ/ պատերազմի վերջում՝ հակամարտությունը կարգավորելու նպատակով
68.	Իրավունքի նորմի այս տարրը ցույց է տալիս հանգամանքները և անձանց շրջանակը, որոնց առկայության դեպքում սուբյեկտների մոտ ծագում են իրավունքներ և պարտականություններ.	ա/ դիսպոզիցիա բ/ հիպոթեզ գ/ սանկցիա դ/ հանձնարարություն
69.	Պատասխանատվության մեկանգամյա կիրառման սկզբունքը ենթադրում է, որ.	ա/ միևնույն հանցագործության համար անձը կարող է դատապարտվել մի քանի անգամ օրենքով սահմանված դեպքերում բ/ գործի վերանայումը արգելված է գ/ նոր հանգամանքների ի հայտ գալը հիմք է, որ գործը վերանայվի հին դատավճռի որոշման հիման վրա դ/ գործի վերանայումը արգելված չէ, սակայն միայն հին դատավճռի կամ որոշման վերացման դեպքում
70.	Նշված պնդումներից ո՞րն է սխալ.	ա/ Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի դատավորներն ընտրվում են ԵԽ խորհրդարանական համաժողովի կողմից 6 տարի ժամկետով: բ/ ՀՀ-ում ամուսնության անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից 300 օրվա ընթացքում ծնված երեխայի իրավունքների վրա: գ/ ՀՀ-ում աշխատանքի ընդունման ժամանակ աշխատանքի ընդունվող անձին ստորագրությամբ աշխատանքի ընդունման պայմաններին կարող է ծանոթացնել գործատուն: դ/ ՀՀ քաղաքացիական իրավունքում վճռի ուժով բնեղենով կատարումն իրականացվում է պարտապանին՝ ուղղակի կալանքի տակ վերցնելու միջոցով:

<u>Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ</u>

Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև: Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը: Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ <u>չորս միավոր</u>:

71. Համապատասխանեցնել իրավունքի աղբյուրները.

1. Մահմեդական երկրներում առավել տարածված է	ա/ նորմատիվ իրավական ակտը
2. ՀՀ–ում իրավունքի հիմնական աղբյուրն է	բ/ նախադեպային իրավունքը
3. Անգլո–սաքսոնական երկրների իրավական համակարգին բնորոշ է որպես իրավունքի աղբյուր	գ/ սովորույթը
4. Հնագույն ժամանակներում հասարակական կյանքի կարգավորում էր	դ/ «Շարիաթը»

1	2	3	4

72. Համապատասխանեցնել միջազգային իրավական քաղաքական պատասխանատվության ձևերը բովանդակության հետ:

1. ռետորսիա	ա/ այն բավարարումը, որ տալիս է իրավախախտ պետությունը տուժած պետության պատվին և արժանապատվությանը հասցված վնասի համար
2. ռեպրեսալիա	բ/ ենթադրում է իրավախախտ պետության կողմից ինչ-որ նյութական օբյեկտի նախկին վիճակի վերականգնում
3. սատիսֆակցիա	գ/ «չզինված» միջոցներ որոնք կիրառվում են ի պատասխան այլ պետության ոչ իրավաչափ գործողությունների, խախտված իրավունքները վերականգնելու նպատակով
4. ռեստորացիա	դ/ պետության սահմանափակող բնույթի միջոցներ են՝ ուղղված այլ պետության դեմ, որը խախտել է առաջինի շահերը

1	2	3	4

73. Համապատասխանեցնել հարկադրանքի տեսակը բովանդակության հետ:

1. Իրավական հարկադրանք	ա/ գույքի բռնագրավում, տուգանք
2. Նյութական հարկադրանք	բ/ ազատության օրինական սահմանափակում
3. Ֆիզիկական հարկադրանք	գ/ կալանք, ազատազրկում
4. Հոգեբանական հարկադրանք	դ/ նախազգուշացում, դիտողություն

1	2	3	4

74. Համապատասխանեցնել աշխատությունը հեղինակին:

1. Շառլ Մոնտեսքյո	ա/ «Հուշեր Սոլֆերինոյի մասին»
2. Անրի Դյունան	բ/ «Հասարակական դաշինք»
3. Իմանուիլ Կանտ	գ/ «Հավերժական խաղաղություն»
4.Ժան–Ժակ Ռուսսո	դ/ «Օրենքների ոգու մասին»

1	2	3	4

75. Համապատասխանեցնել բովանդակությունը բարոյագիտության կանոններին, ընկալումներին և տեսություններին:

1. «Յուրաքանչյուրը պետք է առաջնորդվի այնպիսի կանոններով , որոնք կարող են բերել առավելագույն բարիք բոլոր շահագրգված անձանց»:	ա/ Էգոիզմի ընկալում
2. «Վարվիր այնպես, որ քո անձնական շահը ծառայի ուրիշների շահերին»:	բ/ Ի. Կանտի բարոյական պարտքի տեսություն
3. «Բոլորը պետք է հետամուտ լինեն իրենց շահերի իրագործմանը»:	գ/ Չափավոր ալտրուիզմի կանոն
4. «Գործիր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզիր, որ այն դառնա համընդհանուր օրենք»:	դ/ Կանոններով առաջնորդվող բարոյական օգտապաշտություն

1	2	3	4